

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ՈՒՈՐՏ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԻՐԵՆՅՑ ԾՐԱԳՐԵՐ

Տարվա սկզբին մեծ աղմուկ առաջացրեց ՄԱԿ-ի կողմից առաջարկված փորձագիտական եզրակացությունը, համաձայն որի, գիտությունների ազգային ակադեմիան առաջարկվում է վերածել, այսպես ասենք, հասարակական կազմակերպության կամ գիտնականների ակումբի, իսկ ակադեմիայի ենթակայության տակ գործող ինստիտուտները փոխանցել բուհերին: Ավելի մասնավորեցնելով՝ նշենք, որ ՄԱԿ-ի փորձագետներն առաջարկում էին ստեղծել ազգային գիտական կենտրոններ, որոնց հիման վրա կզարգանան գիտության գերակա ճյուղերը: Ակադեմիան, ըստ առաջարկության, կպահպանի պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Ֆինանսները կտրվեն ոչ թե ակադեմիային, այլ կոնկրետ գիտական թեման առաջարկողին: Ասպիրանտուրան մտնում է դոկտորանտուրայի մեջ, քանի որ մեզ մոտ ասպիրանտ դառնում են հիմնականում բանակից խուսափելու համար, եւ ասպիրանտուրան ավարտողների մի մասն է միայն շարունակում գիտական գործունեությունը: Ահա այսպիսի առաջարկներ, որոնք հարուցեցին շատ գիտնականների տարակուսանքը: Շատերը նույնիսկ մտավախություն հայտնեցին, որ սկսվում է գիտության ոլորտի օպտիմալացման գործընթացը:

Այն բանին, որ գիտությունների ազգային ակադեմիան պետք է բարեփոխվի, կարծես թե ոչ ոք դեմ չէ, սակայն գիտնականները կարծում են, որ դա պետք է արվի ոչ թե ՄԱԿ-ի կամ միջազգային այլ կառույցների միջամտությամբ, այլ սեփական ուժերով: մոլեկուլային ինստիտուտի տնօրեն Կոնստանդին Ղարաբյոզյանը կարծում է, որ նման ծրագրերը նպաստում են ակադեմիայի քայքայմանը:

Գիտությունը բնական ռեսուրսներով աղքատ յաստանի համար գերակա ոլորտներից պետք է լինի: Գիտությունը բանկ հաճույք է, մեր հանրապետությանում ոլորտին տարեկան հատկացվում է մոտ 4 մլրդ դրամ: Այս գումարի մոտ 32 տոկոսը բաժին է հասնում ՄԱԿ-ի ենթակայությամբ գործող ինստիտուտներին: Հայաստանը գիտական մեծ ներուժ ունեցող երկիրն է համարվում: Սակայն գիտության մշտական թերֆինանսավորման պայմաններում կառավարման ներկա մոդելը, գիտնականների կարծիքով, իրեն սպառել է: Եվ առաջին հանգեցրել է ուղեղների արտահոսքի, ինչը միայն տնտեսական, այլև բազում այլ վտանգներ ունի: Գաղտնիք չէ, որ նաեւ գիտության վրա է հիմնված այլ ոլորտների զարգացումը: Հայ գիտնականները այսօր բարձրացնում են նաեւ սերնդափոխության հարցը: Սրանք խնդիրներ են, որոնք, ըստ նրանց, թույլ տալիս, որպեսզի Հայաստանի գիտությունը համընթաց զարգանա:

Հայ գիտնականները ձեռքները ծալած չեն նստել: Առաջարկում են ոլորտի բարեփոխումների իրենց կազմակերպման, ծրագրերը: Գիտնականների հասարակական խորհրդի մշակած ծրագիրը, օրինակ, առաջարկում է ակադեմիայի կազմում գործող ինստիտուտներին առանձնանալ, ինչն ավելի ինքնուրույն գործունեություն կընձեռնի: Խորհուրդն առաջարկում է ստեղծել նաեւ բարենպաստ օրենսդրական դաշտ, մեկ հարց, որին համամիտ են բոլոր գիտնականները: հայրենական գիտության զարգացմանն ու առաջընթացին նպաստելու համար ֆինանսների ավելացումն անհրաժեշտ:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ